

ՃՐԱՎՐԱՐԵՐԻ


6

2970

ՏԱՐԱՆԴԻՒՄ

ԵՒ

ՕՐ



53

d-72

2010

2000

53
Q-72
43

ՏԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՒ ՕԴ



(1007
32339)

ԹԱՌԱՐԵՆՑ

ԱՌԵ. ՄԵԼԻՔ-ՄԱՆՈՒԵԼԻՑ

ԳԵՂԵՐԲՈՒՐԴ
ՏՊԱՐԱՆ Յ. Ի. ԿՐԵՐԱՄԱՆ

1895



19683-59

ՏԱՐԱԾՈՒԹԻՒՆ ԵՒ 0Դ

Ամենքին էլ յայտնի է, որ կրակ ձեռք բերելու համար այժմ լուցկի ունինք: Եթէ զիտենք լուցկին, կըտեսնենք, որ նա կազմուած է մի փոքրիկ կտոր բարակ փայտից, որի ծայրերից մէկի վրա զտնւում է կարմիր, կապոյտ և կամ ուրիշ որ և է զյն ունեցող զլիսիկ: Երբ լուցկին քսում ենք խորդուբորդ առարկայի, առաջ վառւում է նրա զլիսիկը, իսկ յետոյ արգէն և ամբողջ փայտը: Գլխիկը պատրաստուած է մի տեսակ նիւթից, որ լուսածէն (ՓօսՓօր) է կոչում և որը ամենաթեթև շփումից անզամ իսկցն վառւում է: Բայց որովհետեւ լուսածինը շատ արագ է այրւում պրճնում; այնպէս որ այդքան կարծ միջոցում հազիւ թէ փայտն էլ կարողանար վառուել. ուստի սովորաբար փայտը առաջ թաթախում են հալեցրած ծծումբի կամ բնածարպի (ստեարին) մէջ և յետոյ արգէն ծայրին քսում սոսնձի և մի որ և է զյն ունեցող ներկի հետևանած լուսածինը:

Дозволено цензурою. С.-Петербургъ 24 Марта 1895 г.

Հին ժամանակիները, երբ մարդիկ զեռ լույսի
պատրաստել չգիտէին, կրակ վառելու համար վեր-
ցնում էին ամենքին յայտնի կայծաքարը, ծայրին
դնում էին մի կտոր արեթ (զաւ) և պողպատի կտո-
րով (չախմախ) մի քանի անգամ իրար յետեկց
խփում կայծաքարին. ամեն մի հարուածից յետոյ
կայծեր էին երեսում, և դրանք ընկնելով արեթի
վրա՝ այրում էին նրան: (Մինչև հիմա էլ մեր հայ
գիւղացիներից շատերը իրենց չքուխները այդպէս
են կպցնում): Ապա այրուող արեթի վրա դնում
էին մի կտոր բարակ տաշեղ և փչում, որից տա-
շեղը սկսում էր վառուել:

Բայց ի՞նչն է պատճառը, որ արեթը հրահա-
նի կայծերից այրում է:

Եթէ փորձի համար հրահանով մի քանի ան-
գամ խփենք կայծաքարին և յետոյ իսկոյն մատնե-
րս կպցնենք հրահանին, կընկատենք, որ նա այդ
հարուածներից տաքացել է: Ահա հէնց այդ տա-
քութիւնից պողպատէ հրահանի ամենափոքր մաս-
նիկները, որոնք պոկուել են կարծր կայծաքարին
շփուելիս, այնքան խիստ տաքանում են, որ ընկ-
նելով արեթի վրա՝ այրում են նրան: Մինչոյն բա-
նըն նկատում և յետանի (սրելու քար) վրա
գանակ սրելիս, այստեղ էլ դանակից շարունակ կայ-
ծեր են թռչում: Դրա պատճառն էլ միենցնն է.
Քարն ու գանակն իրար շփուելով, այնքան տաքա-
նում են, որ գանակից պոկուած երկաթի կամ պող-
պատի փոքրիկ կտորները հրաշեկ են դառնում: Հա-
մողուելու համար թէ այդ կայծերը յիրաւի երկա-

թի կամ պողպատի կտորներ են, բաւական է մի-
այն վերցնել մի քիչ խարտած երկաթի կամ պող-
պատի փոշէ, պաշել ճրագի բոյի վրա և իսկոյն
կըտեսնենք այդ խարտուածքի փոքրիկ կտորներից
առաջացած փալփլող կայծերը: Գուցէ շատերս փոր-
ձով տեսած լինենք, որ երբ մի պինդ առարկայ
խարտելուց յետոյ ձեռքներս կպցնում ենք խարտած
փոշուն կամ նոյն իսկ առարկային, նրանք տաքա-
ցած են լինում: Երբ մի կտոր փայտ սղոյենք բա-
ւականին երկար ժամանակ, սղոյը կարող է այն-
քան տաքանալ, որ մինչև անգամ ձեռքներս կ'այրի:
Եթէ մի փայտի կտոր շփենք մի ուրիշ կտորի հետ,
երկուսն էլ սաստիկ կրտաքանան. իսկ եթէ երկար
շփենք, նոյն իսկ կ'այրուին: Հէնց այդ եղանակով
էլ կրակ են ստանում այն փայրենի ազգերը, որոնք
ոչ լուցի ունին և ոչ կայծաքար:

Երբ մրսում ենք, ձեռքներս իրար ենք քսում
և նրանք տաքանում են: Կառքերի ու մեքենաների
անիւներին ու սոնիներին էլ նրա համար են ճարպ
ու սե ձիւթ քսում, որ երկար ճանապարհ գնա-
լուց և կամ արագ արագ պտտելուց՝ չսեանան ու
չայրուին: Դրանց նման բազմաթիւ օրինակներ
մեզից իւրաքանչիւրն էլ կարող է գտնել և միշտ
էլ նկատել, որ Երեւան առաջիւայ Երան շինուած լնետ,
այդ շինուած անպատճառ պատճեններն է առաջանառն:

Եթէ ճրագի վրա տաքացնենք երկաթի պղնձի
և կամ որ և է ուրիշ մետաղէ թել կամ ձողիկ, կը
նկատենք, որ ոչ միայն ձողիկի այն ծայրն է տաքա-
նում, որը անմիջապէս կրակի մէջ է գտնւում, այլ

և տաքութիւնը կամաց կամաց անցնումէ ամբողջ ձողիկի վրա, այրելով նցն իսկ ձեռներս: Իսկ եթէ այն ծայրը, որից բռնել ենք, փաթաթենք մի կտոր շորով, բամբակով կամ թղթով և միւս ծայրը նորից տաքացնենք, այն ժամանակ տաքութիւնը ձողերի վրայից կանցնի շորին, բամբակին կամ թղթին, այնտեղեց էլ ձեռքներիս, բայց արդէն շատ աւելի թղյլ քան առաջ, այնպէս որ մենք հեշտութեամբ կարող ենք ձողերը բռնել, առանց ձեռքներս այրելու: Այդպէս էլ, եթէ մի ձեռքով վերցնենք փոյտի, իսկ միւսով երկաթի կամ որ և է ուրիշ մետաղէ ձողիկ և պահենք նրանց կրակի վրայ, կրնկատենք, որ փայտէ ձողը թէպէտե արդէն ըսկուել է այրուել բայց տաքութիւնը չի հաղորդում մեզ այնպէս շուտ, ինչպէս երկաթէ ձողիկը: Դրանից երեսումէ, որ մի քանի առարկաներ տաքութիւնը շատ են ստանում, և հաղորդում, իսկ ուրիշները գանդաղ կամ թղյլ: Այդ պատճառով էլ այնպիսի առարկաները, ինչպէս օրինակի համար երկաթն ու միւս մետաղներն են, կոչում են պահովութեան լաւ հաղորդելու: իսկ փայտը, շորը, բամբակը, թուղթը և գրանց նման շատերը պահութեան վառ հաղորդելու:

Հենց այդ բանը աչքի առաջ ունենալով է, որ մետաղէ առարկաներին, օրինակի համար, հեշտաեռներին, թէյամաններին, որժամաններին և այլն, փայտէ կամ սոկոէ կոթեր են կպցնում: Եթէ, օրինակի համար, ուղում ենք մի որ և է մետաղէ տաքայրած առարկայ վերցնել նրան բռնում ենք ան-

պատճառ փեշներով և կամ մի կտոր շորով, թղթով..., այսինքն այնպիսի բանով, որը տաքութեան վատ հաղորդիչ է, որպէս զի ձեռքներս չ'այրենք:

Մենք մեր տները քարից, աղեւսից կամ փայտից ենք շինում, որովհետեւ դրանք տաքութեան վատ հաղորդիչներ լինելով թղյլ չեն տալիս, որ ձմեռը տաքութիւնը սենեակից դուրս գայ. ամառն էլ սենեակները շատ չեն լինուս նրա համար, որ տան պատերը արեի տաքութիւնը ընդունելով իրենց մէջ, շատ գժուարութեամբ են անցկացնում սենեակների ներսը: Պարտիզանները քնքոյշ ծառերը ձմեռուայ ցրտից պաշտպանելու համար, նըրանց փաթաթում ու ծածկում են յարտով (դարման), որովհետեւ յարդն էլ, իրբե տաքութեան վատ հաղորդիչ թղյլ չէ տալիս, որ ծառի տաքութիւնը իրա միջից դուրս գայ. և միւնյն ժամանակ անց չէ կացնում գրսի ցուրտար:

Հիւսիսային յուրա երկիրների բնակիչներն ու վաճառականները կէտ ձիների, ծովացուերի և կամ փոկերի օրսի գնալիս, շատ անգամ ճանապարհին սառուցից կամ ձիւնից են իրենց համար տներ շինում: Այդպիսի տները առհասարակ երեսի վրայ շուռ տուած, տակը կլոր գաւաթի են նմանում և շինուած են հետեւել կերպով. ընարում են ձիւնով ծածկուած մի հարթ ու բաց տարածութիւն և վրան կլոր շրջանակ են բաշում, այն մեծութեամբ, ինչ մէծութեամբ որ ուղում են իրենց տունը լինի: Երջանակի միջի ձիւնը շերտ շերտ երկու կամ երեք վերշոկ հաստութեամբ կտրտում ու դուրս են տա-

լիս, մինչեւ որ հասնում են սառած գետնին, որն ապագայ տան յատակը պիտի կազմի: Յետոյ այդ կտրտած ձիւնի շերտերից կանգնեցնում են տան պատերը: Ձիւնի կտորները կպցնում են իրար, ամեն մի երկու շերտի արանքից տաքայրած զանակներ անցկացնելով՝ դանակի կպած տեղերում ձիւնը հալում է և խոկցն ցրտից դարձեալ սառչելով՝ երկու շերտերը իրար հետ բոլորովին միացնում: Առհասարակ մի տունը երկու հոգով են շինում: մէկը դրսից, միւսը ներսից: Պատերի հաստութիւնըն էլ այնքան են անում, որ դրսի լոյսը բաւականաչափ ներս թափանցի: Իշարկէ տան ներսը քամի չէ կարող մանել: իսկ ցուրտն էլ այնքան է ներս մտնում, որ պատերը միջի կողմից չն հալում: Եթէ լոյսը քիչէ լինում, այն ժամանակ վերեից կամ կողքերից լուսամուտի փոխարէն մի կտոր թափանցիկ սառոյց են ամրացնում:

Աթուները, սեղանները և մաշճակալները նոյնպէս ձիւնից կամ սառուցից են պատրաստում և զարգարում գաղանների մորթիներով:

Երբեմն մի քանի այդպիսի տներ միասին իրար կողքի շինելով՝ կազմում են մի ամբողջ զիւղ: Իշարկէ այդպիսի տների մէջ մեծ կրակ անել չէ կարելի: Տիւսխային երկրների բնակիչները առհասարակ հում միտ են զործ ածում: ուստի և կերակուր պատրաստելու համար կրակի կարևորութիւն չեն զգում:

Առածներից երեսում է, որ ձիւնն էլ տաքութեան վատ հաղորդիչ է: այնպիսի տներից, ինչ-

պէս այս բոպէիս նկարագրեցինք, չէ թողնում ոչ ներսի տաքութիւնը գուրս գալու և ոչ էլ դրսի ցուրտը ներս մտնելու:

Մեր երկրներում երկրագործը յորեն է ցանում թէ գարնանը և թէ աշնանը: Աշնանը նա ցանում է նրա համար, որ հետեւեալ գարնանը սերմը շուտ աճի և ժամանակին հասնի, որպէս զի կարելի լինի յորենը դաշտից որքան հնարաւոր է շուտ հաւաքել: Երբ ձմեռը ձիւն շատ է գալիս, երկրագործը ասումէ, որ ամառը լաւ հունձ կ'ունեայ: Եւ այդ հասկանալի է: որովհետեւ ձիւնի հաստ շերտերը ծածկելով աշնանացանքսը, որպէս ապօւթեան վատ հաղորդիչ մի կողմից թշլ չի տայ, որ տաքութիւնը հողեց գուրս զայ, միւս կողմից էլ չի թողնի, որ դրսի ցուրտը հողի մէջը մտնի. այսպէս ուրեմն սերմերը և կամ արդէն դուրս եկած հացարցյանը աղատ մնալով դրսի սառնամանիքի ազգեցութիւնից, չեն սառչի ու ոչնչանայ և գարնանը բոլորն էլ կրսկեն աճել: իսկ եթէ առանց ոչնչանալու բոլորն էլ աճեն, ինքն ըստ ինքեան պարզէ, որ հունձն էլ առատ կըլինի:

Մի քանի երկրներում, օրինակ մեղ մօտ կովկասում և ուրիշ օտար երկրներում, կան շատ բարձր սարեր, որոնց զաղաթները միշտ ձիւնով են ծածկուած լինում: Այդպիսի սարերի զաղաթների ձիւնը երբէք չի հալում և քանի գնում շատանում է: բայց որովհետեւ այդտեղերի ձիւնը առհասարակ բաւականին չոր ու փխրուն է լինում, և միւնյն ժամանակ ահագին քանակութեամբ իրար վրայ կի-

տուած, ուստի ամենաշնչին պատճառն անդամ, օրինակի համար մի փոքրիկ կտոր ձիւնի վեր ընկնելը, թռչունի թռիչը, մինչև անդամ հրացանաձգութիւնը բաւական է, որ սարի գագաթից սարսափելի մեծութեամբ ձիւնի հիւսեր փլչին ու ցած թափուին: Երբեմն այդ հիւսերը այնախիսի մ.ծութեամբ են լինում, որ իրենց տակովն են անում ու ոչնչացնում աշազին զիւղեր և շինութիւններ՝ միջի մարդկանց ու անասունների հետ միասին: Այդ տեսակ թաղուած մարդկանց զիակները կարող են տասնեակ տարիներով մնալ ձիւնի տակ, առանց ամենեին փշանալու: Բայց երբ ձիւնը հալչի և այդ մարմինները երես ընկնեն, այն ժամանակ նրանք կրսկսեն փշանալ, որովհետեւ տաքութիւնը օգնում է կենդանիների և բյուսերի փթելուն: Այստեղ՝ ի դէպ կարելի է յիշել որ եթէ հարկաւոր լինի սառած մարդուն ուշքի բերել (կեանք տալ), չլէտք է միանդամից մօտեցնել նրան տաքութեան, օրինակի համար տաքացրած վառարանի, որովհետեւ զրանից կարող է ամբողջ մարմին բորբոքումն առաջանալ և այն ժամանակ էլ հնար չի լինի նրան ազատելու:

Հիմա հետեւեալ փորձն անենք. վերցնենք ապակէ մի փոքրիկ սրուակ, լինենք նրան ջրով և բերնի կողմից սկսենք տաքացնել (ինչպէս որ ցոյց է տուած նկարի մէջ): Սրուակի այն ծայրում, որ տաքացնում ենք, ջուրը կրսկսի եռ գալ. մինչ գեռ միւս ծայրը համեմատաբար այնքան քիչ կրտաքանայ, որ հեշտութեամբ կարելի կրլինի ձեռքում պաշել: Այդ փորձից երեսում է, որ ջուրն էլ տաքութեան վատ

հաղորդիչ է, որովհետեւ, ինչպէս տեսանք, նա լուտաքանումէ միայն այն մասում, որտեղ նրան տաքացնում էնք անմիջապէս. իսկ այն մասին, որ ձեռքով բռնած ենք, շատ քիչ տաքութիւն է հաղորդում: Եթէ ջուրը տաքութեան լուտ հաղորդիչ լինէր, այն ժամանակ ձկները և ուրիշ ջրային կենդանիները չեն կարող ալրել նրա մէջը. բոլորն էլ կըկոտորուեին՝ ամառը խիստ տաքից, ձեռն էլ ցրտից:

Իսկ ի՞նչ բան է տաքութիւնը:

Վերցնենք բոլորովին իրար նման երկու երկաթի կարոներ. եթէ զրանցից մէկը թողնենք սառն գրութեան մէջ, իսկ միւսը տաքացնենք և ուշագրութեամբ դիաենք, նրանց մէջ ոչ մի փոփոխութիւն չնենք կարող նկատել երկուսն էլ դարձեալ բոլորովին իրար նման կ'երեւան: Կշռենք նրանց, դարձեալ ոչ մի զանազանութիւն չենք նկատի. կը նշանակի այս միջոցով էլ տաքութեան մասին ոչինչ չենք կարող իմանալ: Բայց եթէ ձեռքներս կացնենք երկուսին էլ, այն ժամանակ շատ պարզ կրզանք նրանց միջի տաքութեան զանազանութիւնը: Միայն շօշափելով չէ, որ կարելի է նկատել տաքութեան ներկայութիւնը: Հետեւեալ փորձն անենք. վերցնենք պղնձէ կամ որ և է ուրիշ մետաղէ մի զնդակ, որը հետութեամբ անց է կենում նոյնպիսի մ.ծութիւն ունեցող մի օղակի միջով: Եթէ այդ զնդակը տաքացնենք և նորից ուղենանք անցկացնել օղակի միջով կրտեսնենք, որ նա այլ ևս չէ անցկենում: Կը նշանակի զնդակը տաքութիւնից մեծացել աւելի լայնացել է: Մի քիչ յետոյ երբ դնդակը կըհովանայ.

Աթէ նորից փորձենք, դարձեալ նա առաջուայ հեշտութեամբ կ'անցնի օղակի միջով։

Լցնենք ջրով մի փոքրիկ շեշ և բերնին ամրացնելով ապակէ մի բարակ խողովակ, տաքացնենք։ Մենք պարզ կարող ենք տեսնել, որ ջուրը գեռ մինչև եռ դալը խողովակի միջով դէպի վեր է բարձրանում։ Դրա նման մի բան համարեա ամեն օր մենք տեսնում ենք, երբ հեշտաեռը եռ է դալիս. այդ ժամանակ նրա միջի ջուրը տաքութիւնից բարձրանալով, սկսում է կափարիչք տակից թափուել։ Սյօրինակներից արդէն պարզ է, որ տաք ջուրը աւելի մեծ տեղ է բռնում, բան սառը ջուրը. ուրիշ խօսքով, ջուրն էլ տաքութիւնից ընդարձակվում, կամ ինչպէս ասում են, լայնանում է։

Ոչ միայն պղինձը, միւս բոլոր մետաղները, ջուրը, այլ և փայտը, բարը, ապակին, մարդու մարմինը, մի խօսքով, ամեն մի առաջիւայ գագագնենից ընդարձակում այս լայնանում է։ Սյօպէս, օրինակի համար, մեղնից իւրաքանչիւրը նկատած կրլինի, որ բաղնիսից յետոյ կօշիկները դժուարութեամբ են հագնուում։ մինչ գեռ ուրիշ ժամանակ, երբ ոտներս սառն է լինում, նոյն կօշիկները շատ հեշտութեամբ են հագնուում։ Երբ յանկարծ սառը բաժակի մէջ տաք ջուր ենք ածում, նա կոտրւում է։ Ինչք՞ց է այդ։ Բաժակի պատերը սովորաբար աւելի բարակ են լինում, բան տակը, դրա համար էլ, տաք ջուր ածելիս, նրա պատերը աւելի շատ են տաքանում, ուրեմն և աւելի շատ են լայնանում, բան տակը և հէնց պատերի ու տակի այդ անհաւասար լայ-

նանալուց է, որ բաժակը կոտրւում է։ Կարող էր թուել, որ փայտը տաքութիւնից ոչ թէ լայնանում, այլ ընդհակառակը սեղմում, փոքրանում է։ Մենք ասում ենք, որ փայտը տաքութիւնից չըրանում է։ Սյօր նրանից է, որ թաց փայտի մէջ բաւականին մեծ քանակութեամբ ջուր է լինում և երբ տաքացնում ենք նրան, ջուրը միջեց դուրս է գալիս. դրանից էլ փայտը աւելի խտանում և կարծես սեղմում է։ Բայց եթէ վերցնենք բոլորովին ըր փայտ և տաքացնենք նրան, նա անպատճառ կ'ընդարձակուի, կը լայնանայ. թէպէտ ոչ այնքան նկատեի կերպով, ինչպէս մետաղէ առարկաներն են լինում։

Սհա, երբ մարդիկ իմացան առարկաների տաքութիւնից ընդարձակուելու կամ լայնանալու, իսկ ցրտից սեղմուելու այս յատկութիւնները, սկսեցին նրանցից էլ օգուտ քաղել։ Սյօպէս, օրինակի համար, մի քաղաքի եկեղեցու գմբեթի վրայ ծանրութիւնից ձեղքեր բացուեցին. ինչ որ արեցին, ինչ որ քսեցին չկարողացան ձեղքերը փակել որովհետեւ ամեն մի փորձից յետոյ նրանք նորից բացում էին։ Պէտք է մի հնարքով անպատճառ այդ ձեղքերը փակեին, եթէ ոչ գմբեթին քանդուելու վասնգ էր սպառնում։ Իմանալով երկաթի տաքութիւնից լայնանալու, իսկ ցրտից սեղմուելու յատկութիւնը, շինել տուին մի քանի երկաթէ մեծ ջանակներ, շըջապատեցին դրանցով եկեղեցու զըմբեթը և յետոյ շըջանակները սաստիկ տաքացնելով, սերտ կերպով միացրին պատերի հետ։ Երբ նրանք

սկսեցին հովանալ ու սեղմուիլ, այն ժամանակ այնպիսի ոյժով հուպ տուեցին զմբեթին, որ բոլոր ձեղքերը ծածկուեցին և այդպիսով եկեղեցին քանդուելուց ազատուեց:

Այս բոլորից գուրս է զալիս, որ մենք տաքութիւնը ոչ միայն կարող ենք շօշափել, այլ և աչքով նկատել տեսնում ենք, որ նրանից ամեն մի առարկայ բիշ թէ շատ ընդարձակւում է. բայց և այնպէս ասել, թէ ինչ բան է տաքութիւնը դարձեալ չենք կարող:

Եթէ չենք կարող ասել թէ ինչ բան է տաքութիւնը. ապա տեսնենք ի՞նչ է ցրտութիւնը. արգեօք սա մի առանձին որոշ բան չէ:

Եթէ ամառը տաքութիւնը քիչ է լինում, առում ենք ցուրտ է. իսկ եթէ ձմեռը նշնքան տաքութիւն է լինում, ասում ենք տաք է: Այն էլ մինչև անդամ մի և նոյն ժամանակում մէկին տաք է թւում, իսկ միւսին ցուրտ: Կրնշանակի ցրտութիւն ասածը մի որոշ բան չէ, այլ միայն մի խօսք, որով ցոյց ենք տալիս երկու տաքութիւնների մէջ եղած զանազանութիւնը:

Բայց ի՞նչպէս գտնենք այդ զանազանութիւնը և ի՞նչպէս անենք, որ ամեն մարդ էլ ծիշտ կերպով իմանայ եղած տաքութեան չափը: Եթէ մինչև հիմա մեր իմացածի նման ասենք, թէ սա բիչ է տաք, միւսը շատ է տաք, ոչինչ չի դուրս գայ և ոչ էլ դրանից ծիշտ բան չի հասկանայ: Ամեն մէկս էլ զիտենք, իհարկէ, որ իւրաքանչիւր մի առարկայի համար չափ ու կշեռ ունինք, օրինակ,

փութ, զրուանքայ, սաժէն, արշին, մանէթ, կոպէկ և այլն: Կրնշանակի տաքութիւնն էլ կարող է մի որ և չ չափ ունենալ: Եւ յիրաւի, զիտականները մտածել ու մի այդպիսի չափս էլ տաքութեան համար են գտել որը սովորաբար ջէրճալան է կոչւում: Իսկ մեր զիւղացիները ուուսներից վերցնելով հրաժանակ են անոււանում:

Զերմաշափերը առհասարակ շինում են կամ սպիրտով և կամ սնդիկով (ժիվա), որոնք տաքութիւնից շատ զօրեղ ու համաշափ են ընդարձակւում կամ լայնանում: Երկուսն էլ համարեա միենցն կերպով են պատրաստուում: Մեզ մօտ ամենից շատ սնդիկի զերմաշափն է գործ ածւում, որի պատրաստելու մասին էլ հիմն կրպատմեմ:

Մնդիկը (ժիվա) որով զերմաշափ են պատրաստում, մի բաւականին թանկ և հազուազիւտ հանք է: Ուուսաստանում՝ Սիբիրի սարերում նա պատահումէ, բայց շատ սակաւ. մեծ մասամբ ուրիշ երկիրներից են բերում: Արտաքուստ նա շատ նման է արծաթի, մի և նոյն փայլն ու փոյնն ունի. զանազանութիւնը միայն նրանումն է, որ սնդիկը հեղուկ է և աւելի ծանր, այնպէս որ կարելի է նրան իւղի պէս թափել: Եթէ սնդիկը ածենք զետնի վրայ, նա փոքրիկ գնդակիկների կրքաժանուի, որոնք կըսկսեն այս ու այն կողմը գլորուիլ, կարծես կենցանի լինին:

Զերմաշափի պատրաստելու համար, վերցնում են մի բարակ ապակէ խողովակ, $1\frac{1}{2}$ կամ 2 վերշոկ երկարութեամբ և մի ծայրը կրակի վրա գնելով

ատամանում: Երբ այդ ծայրը սկսումէ հալիք, խողովակը կրակից հեռացնում են և միւս ծայրով փշում դէպի ներս, գրանից տաքացրած կողմում մի փոքրիկ, մէջը դատարկ գնդակէ կազմում: Յետոյ այդ գնդակի ու խողովակի մի փոքրիկ մասի մէջ սնդիկ են ածում և բաց բերանը հալեցնելով փակում: Այդպիսով ստացւում է արդէն մասամբ պատրաստ մի ջերմաչափ. բաւական է, որ այդ ջերմաչափի գնտակը ձեռքներս առնենք. սնդիկը խսկոյն ձեռքներիս տաքութիւնիցը կըսկի դէպի վերև բարձրանալ գնենք սառը ջրի մէջ, սնդիկը կըսկի ցած իջնել: Բայց այդ բաւական չէ. զեռ մենք չենք կարող գրանով ճիշտ որոշել թէ մի առարկայ ինչը ան տաքութիւն ունի: Դրա համար նրան դնում են եռացող ջրի մէջ. սնդիկը տաքութիւնից լայնանալով, սկսում է արագ կերպով դէպի վեր բարձրանալ իսկ մի քիչ ժամանակ անցնելուց յետոյ, նա կանգնում է և այնուշեակ որքան էլ ուզում էր տաքացրէք խողովակը, այլ ևս չի բարձրանայ: Խողովակի վրայ այդ տեղում մի նշան են գնում, որ կոչում է ջրէ եռացման լէտ: Դա մի մշտական անփոփոխ կէտ է. որովհեակ գրանից յետոյ, փորձի համար որքան անդամ էլ ուզում էր խողովակը դրէք եռացող ջրի մէջ, միշտ էլ կըսեսնէք, որ սնդիկը հասնում է մինչեւ այդ նշանակած տեղը ու նրանից աւելի չէ բարձրանում: Եռացման կէտը որոշելուց յետոյ, խողովակը գնում են հալուող սառոցը (փշրած) կամ ձիւնի մէջ. ցրտից սնդիկը սեղմուելով, սկսում է այնքան ցած իջնել, մինչեւ որ

մի տեղում գարձեալ կանգ է առնում և այլ ևս չի իջնում: այդ տեղումն էլ խողովակի վրայ մի երկրորդ նշան են դնում, որը կոչում է ջրէ առառողջան լէտ: գա էլ մի մշտական, անփոփոխ կէտ է, որովհետեւ երբ և ինչ ժամանակ էլ ուզում է լինի, եթէ նոյն խողովակը գնենք հալուող սառոցը կամ ձիւնի մէջ, սնդիկը այդ կէտից աւելի չի իջնի: Իհարկէ եթէ ջրի տեղ վերցնենք մի որ և է ուրիշ հեղուկ, նրա թէ եռացման և թէ սառուցման կէտերը բոլորովին ուրիշ կը լինին: Բայց որովհեակ մենք միշտ ջուր ենք բանեցնում, առանց նրան չենք կարող ապրել, և ուրեմն ամեն բոպէ կարող ենք ձեռքի տակ ունենալ գրա համար էլ պայմանաւորուել են, ջերմաչափի մեր յիշած երկու անփոփոխ կէտերը միմիայն ջրի օգնութեամբ որոշել:

1968359 (100/3235)

Եռացման ու սառուցման կէտերը գտնելուց յետոյ, նրանց միջի տարածութիւնը բաժանում են հաւասար մասերի, որոնցից իւրաքանչիւր մէկը կոչում է աստիճան (զրադուզ): Գիտնականներից մէկը, Ռէօմիւր անունով, այդ տարածութիւնը բաժանելէ 80 հաւասար մասերի կամ աստիճանների. իսկ մի ուրիշ գիտնական, Ծելզիուս անունով, 100 աստիճանների: գրա համար էլ առաջինի նման բաժանուածները կոչում են Ռէօմիւրի ջերմաչափ. իսկ երկրորդի նմանները Ծելզիուսի ջերմաչափ: Կան և ուրիշ թւով բաժանմունքներ ունեցող ջերմաչափեր էլ բայց ամենից գործածականները վերև յիշած երկուսն են: Անդ մօտ համարեա միմիայն Ռէօմիւրի, այսինքն՝ 80 արագի ձայնագույնեցող, ջերմաչափն



է գործ ածւում: Տաքութեան ու ցրտութեան աս-
տիճանները հաշլում են այդ կէտից, որի վրա 0 (զերօ)՝
նշանն են զնում: Մաքութեան աստիճանները հաշ-
լում են այդ կէտից դէպի վեր. իսկ ցրտութեան
աստիճանները դէպի ներքեւ:

Սովորաբար ջերմաչափի խողովակը ամրացնում
են փայտէ կամ՝ պղնձէ փոքրիկ տախտակի վրա, որի
երեսին էլ փոքրիկ գծեր ու թուանշաններ են նշա-
նակում, աստիճանները ցոյց տալու համար: Այս-
պէս ուրեմն, եթէ մէկը ասի, թէ դրսումը թէօմիւ-
րի ջերմաչափով 15 աստիճան տաքութիւն կայ.
այդ կընշանակի, որ ջերմաչափի սնդիկը դրսի տա-
քութիւնից 15 աստիճան սառուցման կէտից, այ-
սինքն 0 նշանից, վեր է բարձրացել (ինչպէս որ
նկարի մէջ էլ նշանակուած է): Իսկ եթէ ասեն,
դուրսը 10 աստիճան ցուրտ է, այդ կընշանակի,
որ ջերմաչափի միջի սնդիկը սառուցման կէտից
ցած է իջել 10 աստիճան, կամ 10 այնպիսի բա-
ժանմունք, որոնցից իւրաքանչիւրը հաւասար է սա-
ռուցման կէտից վերև գտնուած բաժանմունք-
ներին:

Մեծ քաղաքներում համարեա ամեն մի տան
մէջ կարելի է ջերմաչափ գտնել. նրան կախում են
կամ սենեակի ներսի պատից և կամ դրսից ամ-
րացնում են լուսամուտի շրջանակի վրայ: Ամենից
շատ նա դործ է ածւում գործարաններում և հի-
ւանդանոցներում: Հէնց ամեն մի տան համար էլ ջերմաչափը շատ օգտակար բան է: Այսպէս, օրի-
նակի համար, նրա օգնութեամբ մենք կարողանում

ենք իմանալ, արդեօք տաք է, թէ ցուրտ սենեակի
կամ դրսի օդը:

Իսկ այդ իմանալը շատ կարեւոր է նրա հա-
մար, որ ցուրտ եղանակին, երբ փողոց ենք ուղում
դուրս գալ առաջուց արդէն իմանալով տաք կը
հագնուեինք, ուրեմն և ազատ կըլինինք մրսելուց.
իսկ մարդու համար, անկասկած, առողջութիւնը
աշխարհիս երեսին ամեն բանից թանկ է:

Այսպէս ուրեմն տաքութեան մասին մեր բո-
լոր ասածներից, իմացանք, որ երբ երկու առար-
կայ իրար ենք շփում տաքութիւն է առաջանում:
որ մի քանի առարկաներ լաւ ու շուտ են հաղոր-
դում ստացած տաքութիւնը, իսկ ուրիշները վատ
ու դանդաղ որ բոլոր առարկաները տաքութիւնից
ընդարձակում կամ լայնանում են. վերջապէս իմա-
ցանք և մի այնպիսի գործիքի կազմութեան մասին,
որի օգնութեամբ կարող ենք չափել տաքութիւնը:

Զանազան առարկաների այդ յատկութիւնները
իմանալով, մենք շատ պարզ կարող ենք տեսնել, որ
դոքա ընդհանրապէս մեղ համար օգտակար են և
որ մեր աշխատանքները թեթեայնելու համար,
յարմար դէպըում կարող ենք այս կամ այն յատ-
կութիւնից օգուտ քաղել:

Երբ խօսում էինք, թէ ջերմաչափը մեղ ինչ
օգուտ կարող է տալ, ասայինք, որ նրանով իմա-
նում ենք սենեակի կամ փողոցի օդի տաքութիւնը:
Ամեն մէկն էլ ի հարկէ, գիտէ, որ ինչպէս ջուրն
ու կերակուրը, այնպիս էլ օդը աշխարհիս երեսին
ապրող արարածների համար մի ամենաանհրաժեշտ

բան է: Առանց օդի չեն կարող ապրիլ ոչ միայն մարգիկ ու կենդանիները, այլ և ծառերն ու ամենափոքրիկ խոտերն անդամ: Եւ յիշաւի, որտեղ էլ ուզում է լինենք, ցամաքի թէ ծովի վրա, բարձր սարերի դիմին, թէ ամենալսոր փոսերի ու ջրհորների մէջ—միևնույն է. ամեն տեղ էլ օդ կայ: Ոյդ բոլոր տեղերումն էլ մենք կը գտնենք անպատճառ կենդանիներ կամ բջյուր, որոնք և շարժումն են և բուժնում, ուրեմն և ապրում են. իսկ եթէ այդ տեղերում օդ չլինէր, կեանք էլ չըր լինի:

Բայց արդեօք Ճիշտ է, որ մենք ամեն կողմից շրջապատուած ենք օդով: Ի՞նչպէս համոզուենք այդ բանի մէջ:

Դրա համար վերցնենք ջրով լիքը մի մեծ խորը գաւաթ, յետոյ վերցնենք մի գատարկ բաժակ և բերնի վրայ շուռ տալով աշխատենք խորասուզել նրան ջրի մէջը (ինչպէս ցոյց է տուած նկարի մէջ):

Սկզբում բաժակի մէջը մի քիչ ջուր կը մտնի, բայց յետոյ ինչքան էլ որ աշխատենք նրան աւելի ևս խորասուզել չենք կարող և միջի ջուրը չի աւելանայ:

Մինչև անդամ եթէ ոյժով հուպ տանք և բաժակի բերանը հասցնենք գաւաթի տակին, գարձեալ կրնկատենք, որ ջուրը մինչև կէսն էլ չի հասնում և աւելի չի բարձրանում: Կարծես մի ինչ որ բան պահում է ջրին և թոյլ չի տալիս, որ նա բարձրանայ ու լցնի ամբողջ բաժակը. Աշա հէնց այդ մի ինչ որ բանը օդն է, որ բաժակի մէջն է

լցուել սենեակից, իսկ սենեակի մէջն էլ գրսից այնպէս որ եթէ այդ փորձը փողոցումն էլ անենք, միենցն բանը կը տեսնենք:

Բացի վերև բերած օրինակից, աչքով էլ կարող ենք տեսնել ու համոզուելով որ մենք ամեն կողմից շրջապատուած ենք օդով: Եթէ մի պարզ օր բաց գաշտի կամ քաղաքի մէջ դէպի հեռուն նայնք, մեզ կ'երեայ, թէ անտառը, բլուրները, տները և այլն կարծես ծածկուած են կապտին տուող մի ամպով. մինչ զեռ իսկապէս ոչ մի ամազ չկայ: Ապա ի՞նչ բան է այդ. ի՞նչն է արգելում մեզ պարզ տեսնել հեռաւոր առարկաները: Ի հարկէ օդը. երբ նա քիչ է լինում, մենք նրան չենք նկատում, որովհետեւ այդ ժամանակ ու թափանցիկ է լինում: իսկ երբ նա շատ է լինում, այն ժամանակ հեռաւոր առարկաները ամպով ծածկուած են երկում, որովհետեւ նա այդ դէպքում հաստ և աւելի պակաս թափանցիկ է լինում. Ճիշտ այնպէս, ինչպէս որ առարկաները. բարակ ապակու յետեկից բոլորովին պարզ են երկում: իսկ հաստ ապակու յետեկից, ամպով ծածկուածի նման, մութ ու խտոն:

Հիմա վերցնենք մի եղան փուչիկ, փենք, մի լաւ ուռցնենք նրան և բերանը թեթե կապենք յետոյ, սկսենք ձեռքով հուպ տալ այդ ժամանակ մենք կը լսենք, ինչպէս օդը զանազան բարձր ու ցածրը ձայներ հանելով, գուրս է գալիս փուչիկի միջից: Այսպէս ուրեմն մենք կարող ենք օդին թէ տեսնել և թէ լսել:

Եթէ մի բաժակ բերան բերան լցնենք ջրով,
յետոյ ծածկենք մի կտոր թղթով և ձեռքներս թե-
թեւ կերպով թղթի վրա դրած, բաժակը շուռ
տանք, բերանը դէպի ներքեւ (ինչպէս ցոյց է տօւած
նկարի մէջ), կրտեսնենք, որ ջուրը բաժակի միջից
չի թափւում, չնայելով որ արդէն ձեռքներս թղթի
վրայից վերցրել ենք: Ի՞նչն է զրա պատճառը. չէ՞
որ թղթից այլ ևս չենք բռնել և ուրեմն նա ազատ
պէտքէ վայր ընկնէր, ջուրն էլ թափուէր: Առաջին
անգամից գուցէ այդ բանը շատ զարմանալի թուի.
բայց եթէ մի քիչ մոտածենք, կրտեսնենք, որ դրա-
նից պարզ բան չկայ: Մենք զիտենք, որ բաժակի
շուրջը բացի օդից, էլ ուրիշ ոչինչ չկայ. կընշանակի
հէնց այդ օդն էլ ներքեցից հուփ է տալիս թղթին
և նրան բաժակին կամ պահպան չկայ չի թողնում,
որ ջուրը թափուի. ուղիղ այնպէս, ինչպէս վերև
յիշած օրինակներից մէկում, բաժակի միջի օդը
հուփ տալով ջրին, չէր թողնում, որ նա վերև բար-
ձրանար:

Զանազան տեսակ ամաններից օդը գուրս քա-
շելու համար, մեքենայագործները մի տեսակ գոր-
ծիք են ծախում, որը կոչում է օդահան մէկնայ (մեր նկարը գորա ամենահասարակ տեսակն է ներ-
կայացնում): Իշարկէ ամեն մարդ չի կարող այդ
գործիքը ունենալ բայց մենք գուրս ենք բերել
նրան այստեղ այն պատճառով, որ ցոյց տանք,
թէ ինչ փորձեր կարելի է անել նրանով և, որ ա-
մենազլիւարն է, նրա օդնութեամբ մի քանի նոր
բաններ էլ սովորենք: Այդ գործիքով զիտնականները

շտա բաներ են գտել: Մեր նկարի վրա նա իսկա-
կանից հինգ անգամ փոքր է դուրս բերուած և
կաղմուած է մի մետաղէ ափսէից, (որի առաջ պատ-
կերի վրա 1 թւանշան է դրած), այդ ափսէի մէջ-
տեղից գէպի ներքեւ է անցնում 2 խողովակը, որի
միջին մասը ամրացրուած է փայտէ պատուան-
գունի մէջ. խողովակի միւս ծայրը մտնում է 3 խո-
ղովակի մէջը, որը շինուած է լինում պղնձից և
աւելի լայն է լինում: դրա մէջ էլ յետ ու առաջ
է շարժւում 4 մխոցը: 2 խողովակը կարող է փա-
կուիլ 5 ծորակալով (կրանով): Այդ տեսակի օդա-
հան մեքենաները համարեա բոլորն էլ միենցն կեր-
պով են շինուած լինում: միայն մի քանիսը մեծ
մեծ են լինում և մէկ մխոցով խողովակի փոխարէն
երկուսն են ունենում: բայց գլխաւոր մասերը բո-
լորի մէջ էլ միատեսակ է լինում:

Վերցնենք, օրինակի համար, երկու կողմից էլ
բաց կամ, ուրիշ խօսքով՝ առանց յատակի մի ա-
պակի սրուակ (բանկայ). բերաններից մէկը փակենք
բարակ փուչիկով և բաց կողմով զնենք սեղանի
վրա. այդ գրութեամբ մենք կարող ենք երկար թող-
նել նրան և նա ոչ մի փոփոխութիւն չի կրի: Խսկ
եթէ նրան գնենք օդահան մեքենայի վրա (ինչպէս
նկարի մէջ էլ ցոյց է արուած) և սկսենք միջի օդը
գուրս տալ, բարձրացնելով ու ցածայնելով լայն խո-
ղովակի մէջ գտնուող 4 մխոցը, այն ժամանակ կընկա-
տենք, որ գրսի օդը սկսում է խիստ ճնշումն գոր-
ծել փուչիկի վրա, վերջինս էլ սկզբում հարթ ու հա-
ւասար լինելով կըսկսի կամաց կամաց փոս ընկնիւ

իսկ յետոյ արդէն կըպատռուի: Այդ նրանից է, որ քանի գեռ օդ կայ սրուակի մէջ, նա ներսից արգելում է զրսի օդին փուչիկի վրա ձնշումն գործելու, բայց հէնց որ ներսի օդը դուրս ենք քաշում, սրուակի մէջը դատարկութիւն է գոյանում: այդ ժամանակ զրսի օդը զիմաղրութիւն չդանելով ներսից, այնպիսի ձնշումն է գործում փուչիկի վրա, որ վերջապէս պատռում է նրան: Այդ փորձերից, մենք պարզ տեսնում ենք, որ օդը ծանրութիւն կամ բաշ ունի. որովհետեւ, ինչպէս ամենքս էլ գիտենք, իւրաքանչիւր մի առարկայ միայն իւր ծանրութեան շնորհիւ է, որ կարողանում է ձբնշումն գործել:

Եթէ մենք մի կերպով կարողանայինք մի որ և է աստղի կամ լուսնի վրայից նայել մեր երկրին, այն ժամանակ մեզ կ'երեար, որ օդը ծածկոցի նման շրջապատել է ամբողջ երկիրը: Այդ ծածկոցյանախ անուանում է օդային օվկիանոս, որովհետեւ նա շատ նման է ջրային օվկիանոսին. նա էլ ջրի նման ալեկոծում ու աղմկում է. երբեմն մինչեւ իսկ աւելի զօրեղ կերպով: Մենք շատ լաւ գիտենք, որ եթէ մի առարկայ դցենք դէպի վերև, որքան էլ ուզում է բարձրանայ այնուամենայնիւ, նա նորից անպատճառ գետին կ'ընկնի: Դա նրանից է, որ իւրաքանչիւր առարկայ ծարութիւն ունի. թէ այդ ծանրութեան պատճառով և թէ այն պատճառով, որ երկիրը ամեն ինչ գէպի իրեն է ձգում, մեր վերև դցած առարկան էլ ուզել չուզել նորից երկրի վրայ պէտք է ընկնի: Հէնց այդպէս էլ

օդն է. եթէ նա ծանրութիւն չընենար և երկիրը նրան դէպի իրեն չնդէք, այն ժամանակ նա չէր շրջապատի երկրին, այլ անպատճառ կըցրուէր այս ու այն կողմը: Նատ դժուար է իմանալ, թէ երկրին շրջապատող օդը ինչքան բարձրութիւն կամ ուրիշ խօսքով, ինչքան հաստութիւն ունի. բայց այն մարդկիը, որոնց պատաշել է օդապարիկով բարձրանալ կամ ամենաբարձր սարերի վլուս ելնել, պատմում են, որ երկրից որքան տւելի են չեռանում, այնքան էլ օդը աւելի նօսր ու թեթև է դառնում. իսկ 7 վերստ բարձրութեան վրայ արգէն այնքան նօսրանում է, որ շունչ քաշելու համար էլ համարեա օդ չէ լինում: մարդու բերնից և քթի ծակերից սկսում է արիւն հրսել վլուսը պատմում է, ուշագնայ է լինում: մինչդեռ օդը այնքան մաքուր է լինում, որ լուսինն ու աստղերը արտասովոր փայլուն ու լուսաւոր են երեսում:

Եթէ օդը ծանրութիւն ունի, ուրեմն նա պէտք է և ձնշումն գործի երկրի վրա գտնուած ամեն մի առարկայի վրա: Եւ յիրաւի, գիտնականները գտել են, որ օդի ծանրութիւնը այնքան մեծ է և այնպիսի զօրեղ ձնշումն է գործում առարկաների վրա, որ եթէ նրա տեղը 5 սաժէն բարձրութիւն ունեցող ջուր լինէր, հազեւ նոյն ծանրութիւնն ու ձբնշումն ունինար: Այնպէս որ, եթէ մենք ուզենայինք սրուակի վրայ կապած փուչիկը պատռել, առանց օդահան մեքենայի օգնութեան, որով մի քիչ առաջ փորձ արինք, պէտք է սրուակի բերնի լայնութեամբ և առնուազը 5 սաժէն բարձրութեամբ

մի խողովակ շինէինք, որպէս զի նրա մէջ լցրած ջուրը իւր ծանրութեամբ կարողանար ձնշել ու պատռել փուչիկը:

Օդը մարգու վրայ ձնշումն է գործում մօտաւորապէս հաղար փութի ծանրութեամբ բայց դրանից մենք հուփ չենք դալիս և որ և է ծանրութիւն չենք զգում, միայն նրա համար, որ նա ձնշում է մեզ ամեն կողմից, վերեից, կողքերից, ներքեւից միւնյն ոյժով. բացի դրանից, մեր թուերում և մարմնի ամեն մի մասում նյոնպէս օդ կայ, որը գիմազրում է դրսի օդի զօրեղ ձնշմանը:

Երբ տաքութեան մասին էինք խօսում, իմացանք, որ բոլոր առարկաները կարելի է բաժանել տաքութեան լաւ ու վատ հաղորդիչների: Վատ հաղորդիչների կարգին կարելի է դասել և օդը: Այսպէս, օրինակի համար, շատ տեղերում ձմեռուաց յրտից պաշտպանուելու համար՝ տների լուսամուտների շրջանակները կրկնակի են անում: Այն օդը, որ դտնւում է երկու լուսամուտների շրջանակների արանքում, որպէս տաքութեան վատ հաղորդիչ իրա միջնով չէ անցկացնում ոչ ներսի տաքը, ոչ էլ դրսի յուրաք:

Չմեռը մենք բրգեղէն ենք հագնում: կենդանիներն էլ մազով ու բրդով են ծածկուած լինում նրա համար, որ այդ բոլոր նիւթերը տաքութեան վատ հաղորդիչներ են, և բացի դրանից, մազերի արանքներում մեծ քանակութեամբ օդ է դտնւում; որը՝ տաքանալով մեր կամ կենդանիների մարմնի տաքութիւնից, չէ թողնում, որ դրսի յուրա օդը

իրա միջից անց կենաց: Տաքութեան համար, բայցի նրանից, որ մեր շորերը բամբակից ու բրդից ենք պատրաստում, բաւականին լայն էլ ենք կարում, միմիայն վիզն ու դոտկատեղին նեղ անելով, որպէս զի մարմնի ու շորերի արանքում որքան կարելի է շատ օդ մնայ, որը տաքանալով մեր մարմնից, թոյլ չի տայ, որ եղած տաքութիւնը իրա միջից անցնի:

Օդը, ինչպէս և առհասարակ ամեն մի առարկայ, տաքութիւնից ընդարձակում, լայնանանում է: Որպէս զի համոզուենք դրա մէջ, հետեւեալ փորձն անենք. ապակէ սրուտի բերանը ամրայնենք մի խցանով, որի միջից անցնումէ ապակէ մի բարակ խողովակ (ինչպէս նկարի վրայ էլ երկում է): Խողովակի ծայրը խորասուզենք բաժակում ածած ջրի մէջ, իսկ սրուտակը տաքացնենք: Այն ժամանակ կընկատենք, որ սրուտակի միջի օդը լայնանում է և կարծես շատանալով սկսումէ ջրի միջից պղպղակներով գուրս գալ:

Այժմ, եթէ վերցնենք ամենաբարակ, օրինակ, ծխախոտի համար գործածուող, թղթի մի նեղ շերտ, և պաշենք նրան վառած լամպայից կամ մոմից 1½ մինչև 2 վերշոկ բարձր, կրնկատենք, որ թղթի շերտիկը գէպի վերև է բարձրանում: Ի՞նչն է դրա պատճառը: Դրա պատճառը այն է, որ լամպայի կամ մոմի վրայում գտնուած օդը տաքանալով լայնանում է. իսկ այդ ժամանակ շատ պարզ է, որ նրան առաջուանից աւելի մեծ տեղ է հարկաւոր, ահա հէնց դրա համար նա ստիպուած է վերև

բարձրանալ, հետն էլ բարձրացնելով թղթի կտորը։
Որ տաք օդը միշտ վերև է բարձրանում, այդ ա-
մեն մարդ էլ կարող է փորձով իմանալ։ Այսպէս,
օրինակի համար, մեր վառարանները տաքացնելիս,
օդի այն մասը, որ մօտիկ է վառարանին և ուրեմն
աւելի շուտ է տաքանում, սկսում է դէպի վերև
բարձրանալ դրանից էլ սենեակում՝ առաստաղի
մօտ միշտ աւելի տաք է լինում, քան յատակի վրա։
Եւ յիրաւի, եթէ ջերմաչափը առաջ գնենք յատա-
կի վրա, իսկ յետոյ առաստաղի մօտ և գիտենք եր-
կու հանգամանքներումն էլ, պարզ կերպով կըտես-
նենք, որ նա յատակի վրա շատ աւելի ցուրտ է
ցոյց տալիս քան առաստաղի մօտ։

Երբ մարդիկ իմացան, որ տաք օդը վերև է
բարձրանում, մտածեցին շատ բարակ թաղանթով
մի այնպիսի թեթև պարկ շինել որը եթէ լցնէին
տաքացրած օդով, անպատճառ պիտի վերև բարձ-
րանար։

Փորձի համար, բարակ ծխախոտի թղթից
կտրտենք 8 կամ 12 կտոր այնպիսի շերտեր, ինչ-
պիսին որ 10 նկարի մէջ 1 թուանշանի տակն է
դրուած։ Երկարութիւնը կարող ենք վերցնել այն-
քան, ինչքան որ ուզում ենք. միայն իհարկէ ցոյց
տուած ձեր համապատասխան պիտի լինի երկարու-
թեանը։ Եթէ այդ ձեռվ կտրտած շերտերի կողքե-
րը սոսնձով իրար կպցնենք, մի այնպիսի գունդ
կըստանանք, ինչպիսին որ տեսնում ենք նկարի վրա
2 թուանշանի տակը։ Ներքեից գունդի բերնին
ամրացնենք մետաղէ թելից շինած մի շրջանակի

որի մէջ տեղից խաչաձեւ անցնում էն երկու նոյն-
պիսի թելեր։ Սյնուշեակ վերցնենք մի կտոր բամ-
բակ, թաթախենք սպիրափ մէջ և ամրացնենք խա-
չաձեւ թելերի վրա։ Ապա զգուշութեամբ բոնելով
մետաղէ թելի շրջանակից, մի քիչ թափ տանք
գունդը, որպէս զի որբան կարելի է շատ օդ լցուկ
մէջը և վառենք բամբակը։ Մի քանի բոպէ յետոյ,
կընկատենք, որ գնափի միջի օդը տաքանում է. գուն-
դը ուռչում է և վերջապէս սկսում է վերև բարձ-
րանալ։ Այդպիսի գունակեր, արգէն պատրաստ, կա-
րելի է դանել մեծ քաղաքների համարեա բոլոր խա-
ղալիքների խանութներում էլ։

Երբ համոզուեցին, որ տաքացրած օդը վերև
է բարձրանում և մինչև անգամ հետն էլ կարողա-
նում է բարձրացնել իրեն շրջապատող թեթև թա-
ղանթը, այն ժամանակ մտածեցին մեծ գունդեր
շինել որպէս զի նրանցով մարդիկ էլ կարողանան
թռչել օդում։ Մտածեցին շինել մեծ օդային գուն-
դեր կամ, ուրիշ խօսքով, օդապարկիներ, իհարկէ,
այժմ արգէն ոչ թէ թղթից, որը ամեն մի չնչին
բանից կարող է պատռուել ու այրուել, այլ բա-
րակ մետաքսի կտորից, երեսն էլ ծածկել լակով կամ
հալեցրած ռետինով, որպէս զի թէ ամուր լինի և
թէ մանր ծակոտիկներ չլինին, որոնց միջով տա-
քացրած օդը կարող է դուրս դալ։

Տաքացրած օդի փոխարէն էլ օդապարիկները
սկսեցին լցնել մի տեսակ գաղով, որը օդից շատ
թեթև է և համարեա բոլորովին նման է այն գա-
ղին, որով մեծ քաղաքների փողոցները գիշեր-

ները լուսաւորում են: Գաղով լցուող այդպի-
սի մեծ օդապարիկները ամեն կողմից պինդ ծած-
կում են, մի ամենափոքրիկ ծակ անդամ չժողնե-
լով: Եթէ այդ տեսակ օդապարիկների մէջ ուղե-
նայինք տաքացրած օդ լցնել, ուրիշ խօսքով, դրա
համար նրանց աակը բամբակ կամ մի ուրիշ բան
վառել ինչպէս վերև թղթի օդապարիկ շնելիս
արեցինք, դա շատ անյարմար ու վտանգաւոր կը
լինէր, որովհետեւ ամենաչնչին մի առիթից կարող
էր կրակ ընկնել: Առհասարակ օդապարիկները գրսից
շրջապատում են թոկից գործած յանցով օրի
ներքեի մասից կապում են մի հիւսած զամբիւղ. այն-
պէս որ օգում թռչել յանկացողը կարող է նրա մէջը
տեղաւորուել և հետն էլ մի քանի բաներ վերցնել:
Երբ ուղում էինք իմանալ թէ տաքացրած
օդի հետ ի՞նչ է պատահում, մենք մի փոքրիկ թղթի
շերտիկ բռնեցինք ճրադի վրա և նկատեցինք, որ
այդ շերտիկը, տաքացած օդի հետ միասին, դէպի
վերև է բարձրանում: Խոկ եթէ այժմ մի փոքրիկ
կտոր վառած մոմի կողքերից դնենք երկու քառան-
կիւնի փայտեր, նրանց վրա էլ մի լամպայի ապա-
կի (ինչպէս այդ երեսում է նկարի վրա) և դար-
ձեալ թղթի շերտիկը պահենք խողովակի վրա,
կրտեսնենք, որ թղթի կտորը էլի դէպի վերև է
բարձրանում, բայց այս անդամ արդէն աւելի զո-
րեղ կերպով, քան առաջ, երբ ուղղակի մոմի վրա
էինք պահում, առանց լամպայի ապակու: Կընշա-
նակի այստեղ ապակէ խողովակն է պատճառ լի-
նում, որ օդը աւելի զօրեղ ու արագ կերպով է

դէպի վերև բարձրանում: Եթէ այդ մէկ խողովակի
վրա մի երկրորդ նրա նմանն էլ դնենք, կընկա-
տենք, որ թէպէտ մոմի լոյսը կարծես, մի քիչ փոք-
րանումէ, բայց դրա փոխարէն օդի բաշելը աւելի
զօրեղ է կատարւում, ուրիշ խօսքով, օդը այժմ
աւելի ևս զօրեղ ու արագ է դէպի վերև բարձրա-
նում: Մեր վառարաններն էլ հէնց նրա համար են
այնպէս զօրեղ կերպով սենեակի օդը ներս քաշում,
որովհետեւ նրանց խողովակները առհասարակ բա-
ւականին երկար են լինում: Գործարաններում, որ-
տեղ զօրեղ կրակ ունենալու համար անհրաժեշտ է
օդի մեծ ու արագ հոսանք, վառարանների ծխնե-
լոցները անպատճառ երկար են լինում, որ, իհար-
կէ, ամեն մի գործարան տեսած մարդ էլ նկատած
կըլինի:

Խոկ որտեղից է ներս մտնում խողովակի մի-
ջով բարձրացող օդը:

Վերևից մտնել նա չի կարող, որովհետեւ, ինչ-
պէս մենք աեսանք, այնտեղից օդը գուրս է գալիս,
իրեն հետ բարձրացնելով և թղթի շերտիկը: Եթէ,
փորձի համար, ոլորենք մի կտոր թուղթ, վառենք
նրան և յետոյ հազցնելով ներքեկից մօտեցնենք ա-
պակէ խողովակին, կընկատենք, որ թղթից բարձ-
րացող ծուխը խողովակի տակով դէպի ներս է ձրդ-
ում: պարզ է ուրեմն, որ օդը խողովակի մէջն
է մտնում ներքեկից: Թէ յիրաւի շրջապատող
օդը խողովակի մէջն է մտնում ներքեկից, կա-
րելի է համոզուել և նրանով, եթէ խողովակը
փոխանակ երկու քառանկիւնի փայտերի վրա դնե-

լու, գնենք ուղղակի սեղանի վրա. ուրիշ խօսքով,
ներքեց ոչ մի անցք չթողնենք, այնպէս որ դրսի
օդն էլ չկարողանայ անցնիլ. այն ժամանակ կրտես-
նենք, որ մոմբ սկսում է խիստ ծուխ անել և վեր-
ջապէս հանգչել: Միւնոյն բանը կարելի է նկատել
և սովորական լամպաների վրա: Ամենքն էլ տեսած
կրլինեն, որ լամպայի հնոցիկի (գարեկայ) վրա
ներքեց բազմաթիւ ծակոտիկներ կան. այդ ծակո-
տիկների արանքովն է, որ օդը աղատ կերպով մըտ-
նում է լամպայի ապակու մէջ. բայց հէնց որ ծած-
կենք այդ ծակոտիկները, լամպան կրսկի խիստ
ծուխ անել:

Շատ յաճախ, իհարկէ բոլորս էլ նկատած կը
լինենք, երբ ձմեռը սենեակի դուռը բաց ենք ա-
նում, իսկոյն զդում ենք, որ ուներս սկսում է մըր-
ուել և կարծես ներքեց քամի է փչում: Ինչի՞ն է
այդ.—շատ պարզ բանից: Մենք զիտենք, որ սե-
նեակի օդը աւելի տաք է, քան դրսինք. ուստի
հէնց որ սենեակի դուռը բաց ենք անում, ներսի
տաք օդը վերեց դուրս է գալիս, իսկ դրսի ցուրտ
օդը ներքեց ներս մանելով՝ բռնում է նրա տեղը:
Այդ բանը մենք կարող ենք ճշտել հետեւեալ կեր-
պով. բաց կանենք տաք սենեակի դուռը և ներքեց շէմքի վրա դնենք մի վառած մոմ. այդ ժամա-
նակ մենք կրնկատենք, որ ճրագի բոյը, օդի հօսան-
քի պատճառով, դէպի սենեակի ներսն է ուղղուամ:
Եթէ մոմը պահենք դռան վերեի մասում, բոյը
դէպի դուրսը կ'ուղղուի. իսկ եթէ դռան մէջ տե-
ղուամ պահենք, այն ժամանակ բոյը ոչ մի կողմէ

էլ չի ուղղուի, այլ կը վառուի բոլորովին ուղղա-
հայեաց գիրքով: Այս ասածներիցս պարզ է, որ ե-
թէ տաք և ցուրտ օդը իրար գիմաց լինին և ը-
րաժանուեն ոչ մի բանով, նրանք կը սկսեն շար-
ժուել. տաք օդը կանցնի ցրտի կողմը, իսկ ցուր-
տը տաքի և մենք կը սկատենք, որ այդ ժամանակ
քամի է առաջանում: Կրնշանակի, քամին ոչ այլ
ինչ է, եթէ ոչ տաք օդի շարժումն դէպի ցուր-
տը և ցուրտ օդինը դէպի տաքը:

Հէնց այդպէս կամ այդ տեսակ պատճառներից
էլ առաջանում են երկրիս վրայի քամիները, որոնք
երբեմն օդուտ են բերում մեզ, երբեմն էլ վեաս:

Հիմա տեսնենք, թէ ի՞նչպէս են դրանք առա-
ջանում երկրիս վրա: Եթէ գնանք մեղնից դէպի
հիւսիս գանուած հեռու երկիրները, օրինակի հա-
մար, Մոսկուայ, Պետերբուրգ, կամ գրանցից էլ ա-
ւելի հիւսիս և ապրենք մի քիչ ժամանակ, կրտես-
նենք, որ այդ տեղերում թէ ձմեռը և թէ ամառը,
մեր երկրից անհամեմատ ցուրտ է լինում: Այդպէս,
որքան դէպի հիւսիս հեռանանք, այնքան էլ ցուր-
տը աւելի խիստ կրլինի, մինչեւ որ կը հասնենք այն-
պիսի տեղերի, ինչպէս, օրինակի համար, սառու-
ցեալ ովկիանոսն է, որը ամառ ձմեռ ծածկուած է
լինում սառոյցով և լողացող սառոյցի ահազին սա-
րերով: Այդ տեղերում արեգակը արդէն այնքան
քիչ ու կարծ ժամանակ է տաքայնում, որ չի կա-
րողանում հալեցնել այն բոլոր ձիւնն ու սառոյցը,
որ գիգուել է տաքիների ընթացքում: Այն գրու-
թիւնն է ներկայացնում ոչ միայն սառուցեալ օվ-

կեանոսը, այլ երկրագնդի հիւսիսային կողմում
դոնուած ահազին տարածութիւններ, որոնք ընդ-
հանուր անունով կոչում են Սառուցեալ գոտի:

Իսկ եթէ հիւսիս չզնանք, այլ նրա հակառակ
կողմը, այսինքն մեզնից գէպի հարաւ. այն ժամանակ
կընկառանք, որ քանի գէպի հարաւ ենք գնում,
ընդհակառակը, այնքան աւելի տաքանում է. այն-
պէս որ այն բոյսերն ու ծառերը, որոնք այնտեղ
անվախ բումում ու աճում են, մեր երկրում ձմե-
ռը բոլորովին սառչում ու ոչնչանում են, եթէ խո-
տով, հողով, որ և է մի բանով չենք ծածկում և կամ
սենեակի մէջ չենք դնում: Այսպէս շարունակ գէ-
պի հարաւ գնալով, մենք կըհասնենք այնպիսի տե-
ղերի, ուր անտանելի տաք է լինում: Երկրիս վրայ
այդպիսի տաք տեղերի նոյնպէս մի ահազին տա-
րածութիւն կայ, որը այրեցեալ գոտի է կոչում:
Այրեցեալ գոտում մշտական ամառ է լինում. այդ
տեղերի բնակիչները հասկացողութիւն անդամ չու-
նին, թէ ի՞նչ բան է ձմեռը, իրա ձիւնով, ցրտով
ու սառնամանիքներով: Խսկական բնակիչները, այ-
սինքն վայրենիները, մինչեւ անդամ շոր էլ չեն բա-
նեցնում, այլ ման են գալիս բոլորովին տկոր, շատ-
շատ առաջները ծածկելով մի որ և է փոքրիկ բա-
րակ կտորով: Ամառուայ ամիսները այնպիսի անտա-
նելի տաք է լինում, արեգակը այնպէս այրում ու
խանձում է, որ խոտերն ու ծառերը բոլորովին չո-
րանում են, հողը ճաքճաքում է, աղբիւրները լճե-
րն ու ձաշիճներն էլ ցամաքում են: Մարդիկ աշ-
խատում են այնպիսի տեղեր գտնել, որ կարողա-

նան մի կերպով տաքից ծածկուել և դանել գեռ-
բոլորովին ցամաքած լծեր ու աղբիւրներ, ծարաւ-
ները յագեցնելու ու տաքութիւնից թուլացած մար-
մինները զովացնելու համար. բայց շատ անդամ
այդ էլ չին գտնում և ծարաւից սաստիկ տանջանք-
ներ կրելով՝ վերջ և վերջոյ մեռնում են: Կենդա-
նիներն էլ ծարաւից ու քաղցից բոլորովին ոյժա-
սպառ եղած՝ կամ կոտորւում են և կամ հողի մէջ
խոր փոսեր փորելով, մէջն են մօնում և ամբողջ
ամիսներ թմրած ու քնաթափութեան ենթարկուած,
մնում են, Ճիշտ այնպէս, ինչպէս որ սառուցեալ
երկրներում լինում են ձմեռուայ ամիսներում: Իսկ
երբ այդ տաք երկրներում մեր ձմեռուայ ամիսներն
են գալիս և սկսում են անընդհատ, յորդ ու որո-
տալից անձրեներ տեղալ այն ժամանակ ամբողջ
բնութիւնը նորից կենդանութիւն է ստեղծում:
Մարդագետիներն ու անտառները, չափանց տա-
քից, խոնաւութիւնից ու անձրեներից ծածկում
են թարմ, հիւթալից խոտերով ու բոյսերով. նորա-
նոր աղբիւրներ ու գետեր են բացւում, կենդանի-
ները երկարատե քնաթափութիւնից արթնանում
են. և այդ բոլորն այնպէս արագ է կատարւում,
որ մենք պատկերացնել անդամ չենք կարող:

Այժմ հասկանալի կըլինի, որ այդ գոտուն շըր-
ջապատող օդն էլ սաստիկ կըտաքանայ. իսկ սառու-
ցեալ գոտունը՝ ընդհակառակը, սաստիկ կըցրաի:
Այդպիսով առաջին երկրներում տաքացած օդ կը
հաւաքուի, իսկ երկրորդ երկրներում ցրտած օդ:
Եւ որովհետեւ երկրիս վրա նրանց իրարից բաժա-

նող ոչինչ չկայ, ուստի, ինչպէս մի քիչ առաջ աեսանք, ցուրտ օդը աշխատելով տաքի տեղը բռնել, կրսկի տակից գէպի տաք երկիրները փել. իսկ տաք օդը վերեից ցրտի տեղը բռնելով, կրսկի գէպի ցուրտ երկիրները փել: Եւ յիրաւի, այդպիսի շըջապտոյտ քամիներ անքնդհատ տեղի են ունենում երկրիս վրա:

Այս բոլորից պարզ է ուրեմն, որ քամին ոչ այլ ինչ է, եթէ ոչ օդի շարժումն, որը առաջ է գտվում երկարութիւնուն և անհաջող առածանալուց: Տաք ու ցուրտ օդը, կարծես, շարունակ իրար հետ կոռուի մէջ են և մէկը միւսին քշելով, նրա տեղն է բռնում: իսկ եթէ երկրիս վրա ամեն տեղ օդը հաւասար կերպով ցուրտ կամ տաք լինէր, այն ժամանակ, իհարկէ, քամի էլ չէր լինի:

Երկրիս վրա փող ցուրտ քամիները կոչում են հիւսիսային քամիներ, որովհետեւ նրանք փում են հիւսիսային ցուրտ երկրներից. իսկ տաք քամիները կոչում են հարաւային, որովհետեւ նրանք փում են մեջնից հարաւ գտնուող տաք երկրներից: Սակայն տաք կամ ցուրտ քամիները միշտ էլ ուղեղ հարաւից կամ հիւսիսից չեն փում: Նատ անգամ, զանազան պատճառներից, հիւսիսային քամին մի քիչ գէպի արևելք է փում, իսկ հարաւայինը, գէպի արևեմուտը. դրա համար էլ հիւսիսայինը այդ ժամանակ կոչում է հիւսիս-արևելեան քամի. իսկ հարաւայինը հարաւ-արևեմուտեան: Այն քամին, որ դարձեալ զանազան պատճառներից արևելքից է փում՝ կոչում է արևելեան, իսկ այն, որ արև-

մուտքից է փչում՝ կոչում է արևեմուտեան: Որպէս զի կարելի լինի ձիշ կերպով իմանալ, թէ որ կողմից է փչումքամին, երկար ձողերի վրա կամ բարձր ծխնելով զների գլխին հողմացոյցներ են շինում, որոնք քամիների զանազան հոսանքներից զանազան գիրքեր են ստանում և մեղցոյց տալիս, թէ քամին որ կողմից է փչում:

Քամիները մեզ շատ օգուտ են բերում: շատ անգամ նկատած կրլիննք, որ քամուց եղանակը փոխում է. այսպէս, օրինակի համար, մի կողմից է փչում եղանակը տաքանում է, մի ուրիշ կողմից է փչումցրտում է: Քամիներին նայելով, կարելի է գուշակել արդեօք անձրեային պիտի լինի, թէ չոր: Քամին է, որ շարունակ ամպեր է հաւաքում չեղած տեղում կամ եղածը ցրւում: Բայի գրանից, քամին մաքրում է մեր շուրջը, տանելով իւր հետ զանազան փթող մարմիններից առաջտցած զարշահոտութիւնները: Եւ վերջապէս մարդիկ էլ իրենց նեղութիւնները թեթեացնելու համար, օգտում են քամու ոյժից: օրինակի համար, փոխանակ ցորենը ձեռքով կամ ջրով աղալու, այնպիսի թեեր են շինում, որոնք քամուց պատելով, պատացնում են իրենց հետ և աղացի քարերը ու այդպիսով ցորենը ալիւր դարձնում:

Սակայն այնպիսի քամիներ էլ են լինում, որոնք մեծ վլասներ են հասցնում մարդուն և երկրին: Այդ այն ժամանակ է լինում, իրը, օրինակի համար, երկու զօրեղ քամիներ պատահում են իրար, կամ երբ քամին մեծ ոյժով է փչում: Այդպիսի քամի-

ները ոչչացնում են ամեն բան, ինչ որ ճանապարհին պատահում է։ կոտրառում ու արմատախիլ են անումահազին ծառեր, թռյնում են տների կտուրները, ծովերի վրա ջարդուփշուր են անում ու խռասուզում մեծ ու փոքր նաւեր։ Այդպիսի քամիները ծրբէն կամ գոնովնէն կոչում: Դրանք մանաւանդ սարսափելի են լինում ծովի վրա և բաց տեղերում, որովհետեւ միւս տեղերում նրանց ոյժը կոտրում է պատահող սարերից, անտառներից կամ շնորթիւններից, ուստի և աւելի քիչ են աւերում, քան իսկապէս կարող են։


Եւելի ևս սարսափելի աւերածներ են անում պատող մրրիկները կամ, ինչպէս մեզ մօտ ասում են, սատանի քամիներ։ Դրանք այն ժամանակ են պատահում, երբ երկու զօրեղ քամիներ իրար են պատահում։ Մկըլը ու երբ գեռ նրանք նոր են հանդիպում, շատ խաղաղ է լինում, բայց հէնց որ նրանցից մէկը յաղթում է միւսին, իսկոյն մի սարսափելի պատող փոթորիկ է բարձրանում։ Փոքր չափով գուցէ, ամենքն էլ տեսած կրլինեն, թէ ինչ պէս սատանի քամին պատաշնելով դէպի վերև է բարձրացնում պատահող տերեները, մանր-մունք բաներն ու փոշին և կաղմում մի մեծ պատող սիւն։

Բոլորովին նյին տեսակ է լինում և ծովի մրրիկը, միմիայն աւելի սոսկալի ու զարհուրելի։ աւազի, փոշու և ուրիշ մանր-մունք բաների փոխարէն, այստեղ ջուրն է աշազին պատող սիւն կաղմելով դէպի վերև բարձրանում։ Միւնյին ժամանակ այդ բարձրացող սեան զլիսին իջնում է մի դարձեալ.


պատառղ ճագարածեւ ամայ ու միանում նրա հետ։ Այդպիսի մի քանի ջրային սիւներ հաւաքուելով միասին ու շարունակ առաջ գնալով, ոչնչացնում են ճանապարհին ամեն բան, ինչ որ պատահում է։ Վայն եկել, տարել է այն մեծ կամ փոքր նաւին, որ զժբախտութիւն կ'ունենայ պատահելու այդ մրրիկին. կրջարդի, կրփշրի ու կրցրուի ամեն կողմը, այնպէս, որ նաւի հետքն անզամ չես գտնի։ Այդպիսի սարսափելի ծովային մրրիկները նաև կամ ջրատիւն են կոչում։ Ծովագնացները ասում են, որ այդ աշուելի մրրիկի կորստաբեր հետեանքներից ազատուելու համար, պէտք է թնդանօթներ արձակել նրա վրա. այդ ժամանակ նա կրցրուի, ասում են, և մեծ վնաս չի պատճառի։

Այսպէս ուրեմն, այն բոլորից, ինչ որ մենք պատմեցինք այս գրքոյի մէջ, գուրս է գալիս, որ մարդ տեղեկութիւն ունենալով տաքութեան և օդի մասին, կարող է օդուել նրանցից, գործածելով մէկը կամ միւսը իւր առողջութեան, ոյժի պահպանութեան և աշխատանքի թեթեռութեան համար։ Մենք իմացանք, թէ ինչպէս է տաքութիւն առաջանում։ իմացանք, որ զանազան առարկաներ լինում են տաքութեան լաւ կամ վատ հաղորդիչներ։ որ տաքութիւնից բոլոր առարկաները ընդարձակւում կամ լայնանում են և, որ այդ բոլորը իմանալով, մարդիկ զանազան նիւթեր ու գործիքներ են հնարում։ Մենք իմացանք նոյնպէս, որ երկիրը շըրջապատուած է օդով, որը, ինչպէս և ամեն մի տաքր. կայ, ծանրութիւն կամ քաշունի, որ նոտաքութիւ-


Նից ընդարձակւում կամ լայնանում է և, ի միջի պյուջ, որ տաքութեան վատ հաղորդիչ է: Իւացանք, որ օդի զանազան տեղերում անհաւասար տաքանալուց՝ երկրի վրա քամիներ են առաջանում, որոնք թէ օգուտ և թէ մասս են պատճառում մեզ: Որովհետեւ օդը երկրի վրա երբեմն տաքանում ու երբեմն ցրառում է, ուստի և նա շարունակ շարժողութեան մէջ է: Եթէ օդը երկրի վրա միակերպ տաք կամ ցուրտ լինէր, այն ժամանակ քամի էլ չէր լինի: Զանդակի ձայն լինի, թէ ամպերի որոտումն, մենք այդ բոլորն էլ լսում ենք, որովհետեւ ամեն կողմից շրջապատուած ենք օդով, որը շարունակ շարժուելով մեր ականջին է հասցնում ամեն մի աղմուկ ու ձայն: Եթէ այդ չլինէր և միենոյն ժամանակ չշարժուէր նա, — կեանք էլ չէր լինի երկրի վրա և ամեն տեղ կրաիրէր գերեզմանային լոռութիւն:



Տես երես 10.




Տես երես 12.




Բէօմիւլի ջերմաչափ.


Տես կրկու 18.



Տես կրկու 20.




Տես կրկու 22.




Shu kphu 22.




Shu kphu 27.




Shu kphu 28. (uq. 10).




Shu kphu 29.



Sku kphu 30.



Sku kphu 32.



Sku kphu 39.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

40	Դ կ ղ մ թ կ ի ց	կ ղ մ թ կ ի ց
38	Ե պ ղ մ թ կ ի ց	կ ղ մ թ կ ի ց
35	Ե պ ղ մ թ կ ի ց	կ ղ մ թ կ ի ց
32	Ե պ ղ մ թ կ ի ց	կ ղ մ թ կ ի ց

Ք ա մ չ մ տ ե ն	Ղ դ մ լ դ ղ	
Ն ա լ ղ զ չ մ տ ե ն	Ղ դ ղ ի կ ո ւ ս կ ա փ	Ա վ ո ւ ն ե ն կ ո ւ ս կ ա փ
Ն ա կ մ դ կ ո ւ ս կ ա փ	Ղ դ ղ ո ւ ս կ ա փ	Ա վ ո ւ ն ե ն կ ո ւ ս կ ա փ
Ք ա մ չ մ տ ե ն	Ղ դ ղ ո ւ ս կ ա փ	Ա վ ո ւ ն ե ն կ ո ւ ս կ ա փ
Ն ա լ ղ զ չ մ տ ե ն	Ղ դ ղ ի կ ո ւ ս կ ա փ	Ա վ ո ւ ն ե ն կ ո ւ ս կ ա փ
Բ ր ա լ ղ ե ն ս կ ա փ	Մ զ ո ւ ս կ ա փ	Ա վ ո ւ ն ե ն կ ո ւ ս կ ա փ
Կ ո ւ ս կ ա փ Ա մ զ ո ւ ս կ ա փ	Կ ո ւ ս կ ա փ Ա մ զ ո ւ ս կ ա փ	Ա վ ո ւ ն ե ն կ ո ւ ս կ ա փ
Բ գ ո ւ շ կ ի զ մ ն ե ն	Բ գ ո ւ շ կ ի զ մ ն ե ն	Ա վ ո ւ ն ե ն կ ո ւ ս կ ա փ
»	»	»
Ա ր ա վ ե լ ղ օ	Ա ր ա վ ե լ ղ օ	»
Փ ի տ մ շ մ զ օ	Փ ի տ մ շ մ զ օ	»
Պ ղ ջ ի տ ո ղ օ մ զ օ	Պ ղ ջ ի տ ո ղ օ մ զ օ	»
Ա մ ս մ զ օ	Ա մ ս մ զ օ	»
Հ ա ս մ մ օ ր	Հ ա ս մ մ օ ր	»
Բ ր ա ս պ լ ղ օ զ օ	Բ ր ա ս պ լ ղ օ զ օ	»
Ա ռ ո ւ շ	Ա ռ ո ւ շ	»
Ե կ ի շ ն ս չ	Ե կ ի շ ն ս չ	»
Գ ի շ ն ս չ	Գ ի շ ն ս չ	»

Ա կ ա ս ս կ ա փ Ա կ ա ս ս կ ա փ

2970

ՊԵՏԱԿԱՆ



2013



Գիւն է 12 ԿՈՊ.